ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ԵՒ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷՆԵՐԸ. ՈՐՈՇ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

ԱՐԵՍՏԱԿԷՍ ՍԻՄԱՒՈՐԵԱՆ
ares@noravank.am

ՄՈՒՏՔ

Ի. դարասկզբին Օսմանեան Կայսրութեան կողմից պետական մակարդակով հայոց դէմ իրականացուած ցեղասպանութեան հարցերին նուիրուած հայրենական ուսումնասիրութիւններում հազուադէպ ենք հանդիպում հայ կաթողիկէների առնչուող աղբիւրներին, որոնք մատնացոյց անեն, որ օսմանեան ղեկավարութեան համար դաւանանքային տարբերութիւնն ամէնեւին էլ նշանակութիւն չունէր, երբ հարցը վերաբերւում էր հայերի համակարգուած եւ ծրագրուած ոչնչացմանը: Հակառակ այն իրողութեանը, որ հայ կաթողիկէների նկատմամբ առանց խտրականութեան իրականացուել է ցեղասպանութեան նոյն քաղաքականութիւնը, ինչ եւ կայսրութեան ողջ հայութեան նկատմամբ, թուրքական գիտական եւ մերձգիտական շրջանակները չհիմնաւորուած նշում են, որ հայ կաթողիկէները չեն տուժել, քանի որ եղել են եւրոպական տէրութիւնների եւ յատկապէս Հռոմի պապի պաշտպանութեան տակ[1]: Սակայն փաստերը, աղբիւրները վկայում են, որ թուրքական մօտեցումներն անհիմն են: Այս քննարկումով մենք կը ջանանք հերքել այդ տեսակէտը:

Ցեղասպանութեան հարցում ժխտողականութեան դիրքերից հանդէս եկող թուրք «գիտնականները» (Եուսուֆ Հալաջօղլու, Դաւութ Քըլըչ[2] եւ այլք) Առաջին Աշխարհամարտի տարիներին կայսրութեան կաթողիկէ եւ աւետարանական հայերի վերաբերեալ հրատարակած հետազօտութիւններում այդ համայնքների հանդէպ իրենց դրական գնահատականները կառուցում են միքանի թուրքական պետական փաստաթղթերի վրայ[3], որոնք, անկասկած, միակողմանի են ու չեն դիմանում այլ աղբիւրների[4] հակառակ պնդումներին:

Հարկ է նկատել, որ նախքան Մեծ Եղեռնը, Օսմանեան Կայսրութիւնում գոյութիւն ունէր 120,000անոց հայ կաթողիկէ համայնք։ Միայն Արեւմտեան Հայաստանում եւ Կ.Պոլսում հայ կաթոլիկների թուաքանակը 84.000 էր, որից միայն 25.000ը փրկուեց ջարդերից եւ մաս կազմեց սփիւռքի Հայութեան[5]։

Օսմանեան Կայսրութիւնում դիւանագիտական առաքելութեան մէջ գտնուող օտարերկրեայ դեսպանների, հիւպատոսների, կաթոլիկ եւ աւետարանական միսիոնէրների հեռագրերը, նաեւ ջարդերից փրկուած հայ կաթողիկէների՝ յետագայում տպագրուած յուշերը եւ այլ նիւթեր բացայայտում են նրանց նկատմամբ իրականացուած տեղահանման, համատարած կոտորածների, բռնի իսլամացման եւ թուրքացման համակարգուած քաղաքականութիւնը։

Դեռեւս 1915 Փետրուարին անակնկալ կերպով Ստամբուլի հայ կաթողիկէ համայնքին պատկանող Մխիթարեան Վարժարան է այցելում Կրթութեան Նախարարութեան կողմից ուղարկուած պատկառելի մի յանձնախումբ եւ պահանջում տեղեկութիւններ՝ ուսուցիչների, անձնակազմի, դպրոցի եւ ծրագրերի մասին[6]։ Յատկանշական է, որ դա կատարւում է այն ժամանակ, երբ կայսրութիւնն արդէն պատերազմի մէջ էր։ Կարծում ենք, որ յիշեալ նախարարութիւնը կրթական ինչ-ինչ խնդիրների պատրուակով տեղեկութիւններ է հաւաքել եւ հաւանաբար տրամադրել պետութեանը համապատասխան մարմիններին՝ հայերի տեղահանութեան եւ կոտորածներին նախապատրաստուելու համար։

1915 Ապրիլի 24ին, Կ.Պոլսի հայ մտաւորականութեան ձերբակալութեանը զուգահեռ, թուրքական ոստիկանութեան կողմից իրականացուել է մէկ այլ գործողութիւն եւս՝ Ախալքալաքի ռուսահպատակ հայ կաթողիկէների նկատմամբ, որոնք, տնտեսական եւ ընկերային ծանր պայմաններից ելնելով, առեւտուր էին անում կամ ուսումնառութեան նպատակով գտնւում էին Կ.Պոլսում, որոշակիօրէն պահպանելով կապը նաեւ իրենց բնօրրանի՝ Արեւմտեան Հայաստանում գտնուող Կարին-Էրզրումի հետ։ Անգամ օտարերկրեայ հպատակութիւնը չի խանգարել թուրքերին ձերբակալել եւ Տէր-Զօր աքսորել նաեւ հայութեան այս շերտին[7]։

Ցեղասպանութեան տարիներին հայ կաթողիկէների վերաբերեալ առաջին թուրքական աղբիւրները թուագրւում են 1915 Մայիսի 24ով։ Դրանցում մասնաւորապէս նշւում էր. «*Հայերի հանդէպ կառավարութեան կողմից ձեռնարկուած հարկադիր միջոցառումները բացառապէս հիմնուած են երկրի անվտանգութեան եւ հասարակական կարգ ու կանոնը բաւարարելուն եւ պաշտպանելուն։ Հայերի դէմ կառավարութիւնը չի վարում ջարդերի քաղաքականութիւն, դեռեւս չէզոք դիրքորոշման մէջ մնացող կաթոլիկներին եւ բողոքականներին ձեռք չեն տուել*»[8]։ Սա, ինչպես նշում է թուրք հետազօտող Հալաչօղլուն՝ Օսմանեան պետութեան կողմից տրուած պատասխանն էր արեւմտեան երկրներին[9], որով փորձ էր կատարւում պետական մակարդակով հերքելու ջարդերի վերաբերեալ տեղեկութիւնները, որոնք արձագանգ էին գտել արեւմտեան մամուլում եւ դիւանագէտների հեռագրերում։ Հայ կաթողիկէների եւ աւետարանականների մասին շեշտադրումները բացառապէս նպատակ ունէին չէզոքացնել այն երկրների արտաքին միջամտութեան հնարաւորութիւնները, որոնք շահագրգռուած էին տեղի հայ կաթողիկէների եւ բողոքականների պաշտպանուածութեամբ։

Չնայած թուրքական կեղծ հաւաստիացումներին, թէ հայերի, մասնաւորապէս՝ կաթողիկէ եւ աւետարանական դաւանանքային խմբերի նկատմամբ բացառում էր որեւէ գործողութիւն, այդուհանդերձ, կոտորածները չշրջանցեցին վերջիններիս։ Հայ կաթողիկէ հոգեւորականութիւնը որոշակի ջանքեր էր գործադրում՝ փրկելու իր համայնքը կոտորածներից եւ տեղահանութիւններից։ Այս առումով յիշարժան են այդ տարիներին Հայ Կաթողիկէ Եկեղեցու պատրիարք, Պօղոս-Պետրոս ԺԳ.ի վերոյիշեալ ուղղութեամբ կատարուած ջանքերը, որոնք առանձնապէս դրական ազդեցութիւն չունեցան։ Այսպէս, դանիական աղբիւրներից իմանում ենք, որ «*1915 թուականի Օգոստոսի 16ին Գերմանիայի դեսպանն ընդունելութեան ժամանակ իր մօտ է կանչել Թուրքիայի նախարարին եւ խնդրել նրան՝ համոզել իր կառավարութեանը վերջ դնել հայերի հալածանքներին, յատկապէս կաթոլիկ հայերի, ովքեր երբեք ոչ մի յեղափոխութեան չեն մասնակցել եւ չեն խառնուել քաղաքականութեան... Երբ թուրք վեզիրի տուած խոստումները*

դրժուեցին, եւ հալածանքներն ու սպանութիւնները շարունակուեցին, նորին մեծութիւն Փոլ Պիէռ 13րդը (Պօղոս-Պետրոս ԺԳ. - Ա.Ս.)՝ *հայ-կաթոլիկ եկեղեցու պատրիարքը, դիմեց Իսպանիայի նախարարին եւ խնդրեց նրան Իսպանիայի անունից եւս մէկ անգամ դիմել վեզիրին, որ գոնէ կաթոլիկ հայերին չենթարկեն հալածանքների: Իսպանիայի նախարարը համաձայնեց եւ անցած երկուշաբթի օրը ընդունելութեան ժամանակ դիմեց վեզիրին, սակայն վերջինս «զարմացաւ»՝ լսելով, թէ ինչ դաժանութիւններ են կատարուել, եւ խոստացաւ անմիջապէս հրամայել, որ կաթոլիկ հայերին ձեռք չտան»*[10]:

Հայ կաթողիկէների կոտորածներին վերջ դնելու՝ Պօղոս-Պետրոս ԺԳ.ի յորդորները պատահական չէին: Դեռ 1915 Մայիս-Յունիսին տարաբնոյթ պատրուակներով նախ աքսորուում, յետոյ տարբեր վայրերում ոչնչացուում են Մխիթարեան եւ Արծիւեան միաբանութիւնների բազմաթիւ կղերականներ: Հայ Կաթողիկէ եկեղեցուն ծառայող հոգեւորական դասի նկատմամբ նման առաջին գործողութիւններն իրականացուեցին Մալաթիայի եպիսկոպոս Միքայել Խաչատուրեանի, Տիգրանակերտում՝ Անդրէաս եպիսկոպոս Չելէպեանի, տեղի եկեղեցու հայ քոյրերի հետ. յետագայ ամիսներին դրանք շարունակուեցին այլ վայրերում[11]:

Իզմիթի Մխիթարեան հայրերը երկարամեայ տառապանքներից յետոյ վերադարձան աքսորից՝ ազդեցիկ մի հայի միջամտութեամբ, իսկ Պարտիզակի հայրերն աքսորուելուց յետոյ, մէկ այլ բարերարի միջնորդութեամբ, հնարաւորութիւն են ստանում ապաստանել Կ.Պոլսում[12]: Մինչդեռ Մարդին քաղաքի հայ կաթողիկէ համայնքի առաջնորդ Իգնատիոս արքեպիսկոպոս Մալոյեանը, ինչպէս նաեւ Տրապիզոնում գտնուող Մխիթարեան երեք հայրերը սպանուում են[13]: 1915 Յունիսին Մալոյեանին առաջարկում են հրաժարուել քրիստոնէութիւնից եւ ընդունել մահմեդականութիւն, ինչը նա մերժում է: Մերժումից յետոյ նրա հետ միասին Մարդին քաղաքի հայ կաթողիկէ համայնքի 400 բնակիչներ տեղահանուում են եւ ուղարկուում Տիգրանակերտ: Ճանապարհին տեղահանուածներն առանձնացուում են միմեանցից, վերածուում փոքր խմբերի ու մերձակայ ձորակներում սպանուում թուրք զինուորականների կողմից: Իսկ Մալոյեանը

Տիգրանակերտի մօտակայքում գտնուող Քարաքէօփրու Գիւղում գնդակահարւում է[14]:

Կոտորածներին զուգահեռ՝ իրականացուել է նաեւ հայ կաթողիկէների իսլամացման գործընթաց: Մինչեւ ցեղասպանութիւնը բոնի կրօնափոխուել են ամբողջ գիւղեր Արդահանում (Մամանելիս, Վէլ եւն.), իսկ ցեղասպանութեան տարիներին այդ գործընթացները շարունակուել են: Կրօնափոխութեան դէպքեր՝ հայ կաթողիկէների մէջ արձանագրուել են նաեւ Կարինի հայաբնակ Արծաթի եւ Թուանջ գիւղերում: Այս գիւղերի բնակիչների մի մասը, որ 1830ին չէր տեղափոխուել Ջաւախք, Հայոց Ցեղասպանութեան տարիներին մահուան սպառնալիքի տակ հրաժարուել է կաթոլիկութիւնից եւ իսլամացել[15], իսկ մի մասն էլ կոտորուել է:

Օսմանեան բանակում ծառայող զինուորների եւ այդ երկրում դիւանագիտական առաքելութեան մէջ գտնուող գերմանացի բարձրաստիճան ծառայողների հեռագրերից յայտնի են դառնում հայ կաթողիկէների եւ աւետարանականների նկատմամբ իրագործուած տեղահանութիւնների եւ իսլամացման փաստեր.

«Հայերի հետապնդումներն արեւելեան նահանգներում թեւակոխել են իրենց վերջնական փուլը: Թուրքական կառավարութիւնը թոյլ չտուեց իրեն խանգարել Հայկական հարցի լուծումը հայ ցեղի ոչնչացման ճանապարհով իր ծրագրի կատարմանը ո՛չ մեր միջնորդութիւնների, ո՛չ ամերիկեան դեսպանի եւ պապական նուիրակի, ինչպէս նաեւ Անտանտի կողմից սպառնալիքների, առաւել եւս Արեւմուտքի հասարակական կարծիքը հաշուի առնելու միջոցով: Այժմ նա պատրաստւում է ձուլել եւ ցրել առաջին տեղահանութիւնը վերապրած հայերի վերջին մնացորդները: Ընդ որում, խօսքը վերաբերում է Հիւսիսային Միրիայում (Մարաշ, Հալէպ, Ռաս-ուլ-Այն), ինչպէս նաեւ Փոքր Ասիայի որոշ խոշոր բնակավայրերում (Անգորա, Կոնիա) մնացածներին, յատկապէս նրանց, ովքեր այնտեղ են յայտնուել տեղահանութեան հետեւանքով, կամ էլ աւելի շուտ այնտեղ տեղափոխուածներին: Սակայն հնաբնակների շրջանում, ինչպէս նաեւ ***կաթոլիկ եւ բողոքական հայերի շրջանում,*** *այժմ կատարւում են «զտումներ», թէեւ Բարձր Դուռը կրկին խոստացել է խնայել այս վերջիններին:*

Այս մնացածները մասամբ տեղահանւում են աւելի հեռու՝ Միջագետք, իսկ մասամբ էլ ենթարկւում մահմեդականացման: Մարաշում եւ Հալէպում տեղահանութիւնն ընթանում է մեծ թափով: Դիարբեքիրում իր գործունէութեամբ յայտնի վալի Ռաշիդ բէյը Անգորայում զբաղուած է փնտռելով վերջին ***հայերին՝ ներառեալ կաթոլիկներին,*** *եւ տեղահանում նրանց: Նոյն ձեւով վարւում էին Էսքիշեհիրում եւ Իզմիթի շրջակայքում դեռ* ***մնացած բողոքական եւ կաթոլիկ հայերի*** *հետ (*ընդգծումները մերն են - *Ա.Ս.): Չնայած պաշտօնական անձանց բոլոր ժխտումներին, հայերի հետապնդման այս վերջին փուլում մեծ դեր է խաղում մահմեդականացումը*[16]:

Հայ կաթողիկէների բռնի իսլամացման քաղաքականութիւնն անգամ Եղեռնի տարիներին եղել է կառավարութեան ուշադրութեան կենտրոնում: Դրա վկայութիւնն է հետեւեալ փաստը: 1917 Յունիսին Էդիրնէի եւ Անկարայի նահանգներում բարձրանում է այնտեղ մնացած եւ բռնութեամբ իսլամացած կաթողիկէ հայերին աքսորելու խնդիրը: Ինչպէս պարզւում է, բռնի իսլամացուած կաթողիկէ հայերի շրջանում պետութիւնը նկատել էր գաղտնի կերպով քրիստոնէական կաթոլիկ սովորոյթների պահպանման դէպքեր, ինչն էլ հիմք է ծառայել նրանց աքսորելու[17]:

Գերմանացի հետազօտող Վոլֆգանգ Գուստը, անդրադառնալով Օսմանեան Կայսրութեան հայ կաթոլիկ եւ աւետարանական բնակչութեան նկատմամբ գերմանական կաթոլիկ եւ բողոքական եկեղեցիների պահուածքին, նշում է.

Գերմանիայի կայսրը միայն մէկն էր նրանցից, ովքեր կարող էին փրկել հայերին: Կային նաեւ այլ հզօր եւ ազդեցիկ հաստատութիւններ՝ գերմանական եկեղեցիներ: Բարձրագոյն կաթոլիկը քաղաքական գործիչների շրջանում Մաթիաս Էրցբերգերն էր, որը յաճախ էր լինում Թուրքիայում եւ հաղորդագրութիւններ էր կազմում, թէ ինչպէս կարելի է փրկել հայերին: Նրա առաջարկները բաւականին պարզամիտ էին: Այնուամենայնիւ, նրա միջոցով տեղեկացուած էր Գերմանիայի կաթոլիկ եկեղեցին: Եւ ի՞նչ արեց այն: Ոչինչ: Աւելի նշանակալից էր աւետարանական եկեղեցու վերաբերմունքը: Նրա բարեգործական կենտրոնները Թուրքիայում անում էին ամէն ինչ՝ հայերի տառապանքները մեղմացնելու համար: Եւ նրանք

ստոյգ տեղեկութիւններ էին հաղորդում ցեղասպանութեան մասին, ինչպէս նաեւ Լեփսիուսն էր ճշգրտօրէն տեղեկացրել իր աւետարանական եղբայրներին՝ գաղտնի հանդիպումների ժամանակ: Եւ ի՞նչ արեցին գերմանացի բարձրագոյն բողոքականները: Ոչինչ: Նրանք ընդհանուր բանաձեւ յղեցին կանցլերին՝ յստակ իմանալով, թէ ինչ քաղաքականութիւն է նա վարում հայերի հանդէպ: Միայն իր ստորագրեալների քանակով եւ որակով յարգանքի արժանի այս յուշագիրը փոխանցուեց Կոստանդնուպոլսի դեսպանատանը եւ յանգեցրեց նրան, որ Գերմանիայի բարձրաստիճան ներկայացուցիչները Թուրքիայում սկսեցին խնդրել խնայել գոնէ հայ կաթոլիկներին, նախեւառաջ հայ բողոքականներին, քանի որ նրանք յատկապէս օրինապաշտ են եւ զերծ՝ յեղափոխական գաղափարներից: Այլ կերպ ասած՝ գերմանական բողոքականների կարծիքով՝ հարկաւոր չէր անվերապահօրէն վստահել գրիգորեանական հայերին: Ցեղասպանութեան համար պատասխանատուութիւն կրող թուրք պաշտօնեաները «իրար էին շփում ձեռքերը» բաւականին անսպասելի այս օժանդակութիւնը ստանալով: Կաթոլիկ եւ բողոքական հայերին գրեթէ ոչինչ չօգնեց, նրանք նահատակուեցին, ինչպէս եւ իրենց հայ առաքելական հաւատակից եղբայրները[18]:

Պատմական փաստերի համաձայն, հայ կաթողիկէ համայնքից ցեղասպանութեան զոհ դարձան աւելի քան 30,000 հայեր, Հայ Կաթողիկէ եկեղեցու 102 հոգեւորական, միքանի եպիսկոպոս եւ 45 վանական[19]: Հայ կաթողիկէների մեծ մասը ստիպուած եղաւ գաղթել եւրոպական եւ մերձաւորարեւելեան երկրներ: Ինչպէս իրաւացիօրէն նկատել է պատմաբան Սալաւաթ Արոյեանը. «*Թուրքական ջարդարարները հայերին կոտորում էին ոչ թէ նրա համար, որ նրանք առաքելականներ էին կամ հայ կաթողիկէներ: Նրանք կոտորուեցին միայն նրա համար, որ ... հայ էին*»[20]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ներկայացուած միքանի փաստերը հայ կաթողիկէների նկատմամբ իրականացուած ցեղասպանական գործողութիւնների ընդամէնը դրուագներ են եւ վկայում են, որ թուրքական «գիտական» մօտեցումները, թէ հայ կաթողիկէները չեն

ենթարկուել տեղահանման եւ ոչնչացման, ընդամէնը պատմական փաստերն աղաւաղելու փորձեր են:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Davut Kılıç, "1915'te Tehcir Edilmeyen Ermeniler", Ermeni Arastırmaları 1. *Türkiye Kongresi Bildirileri* (1915ին չաքսորուած հայերը. հայկական հետազօտութիւններ,) 1, Թուրքիայի կոնգրէսի արձանագրութիւնները II, Անկարա, 2003, էջ 118:

[2] Kılıç, էջ, 114-117:

[3] Yusuf Halaçoğlu, *Ermenilerin Suriye'ye Nakli: Sürgün Mü, Soykırım Mı?* (Հայերի արտաքսումը Սիրիա. բռնագաղթ, ցեղասպանութիւն), Belgeler Ankara, Nadir kitap, 2004, էջ 11-12, 22. նաեւ՝ Yusuf Halaçoğlu, *Ermeni Tehciri* (Հայերի բռնագաղթը), Istanbul, Babıali Kültür Yayıncılığı, 2004, էջ 82:

[4] Մանրամասն տե՛ս՝ Wolfgang Gust, *Ermeni Soykırımı 1915-1916 Alman Dışişleri Bakanlığı Siyasi Arşiv Belgeleri* (Հայոց Ցեղասպանութիւնը Գերմանիայի ԱԳՆ 1915-1916 արխիւներում), Istanbul, Belge yayınları, 2012, էջ 445-447, 460-463, 542, 641, 646, 673, 707, 737, 819, 822. նաեւ՝ Թանէր Աքչամ, *Երիտթուրքերի Գործած Ոճիրը Մարդկութեան Դէմ*, Երեւան, «Տիգրան Մեծ» Հրատ., 2015, էջ 463:

[5] Թորգոմ Փոսթաճեան, *Հայաստանեայց Եկեղեցին Եւ Միւսները*, Լոս Անճելոս, Այր Բեն, 2005, էջ 192:

[6] *Համայնապատկեր Վիեննական Մխիթարեան Հայրերու Կրթական Գործունէութեան, Հատոր Ա.*, Իսթանպուլ, «Մխիթարեան» Տպ., 2008, էջ 43:

[7] Մանրամասն տե՛ս՝ Ն. Մակարոֆ, *Դէյր-Էզ-Զօրի Աքսորեալը*, Երեւան, «Զանգակ-97», 2001, էջ 25-35:

[8] Halaçoğlu, *Ermenilerin Suriye'ye*, էջ 21-22:

[9] Նոյն, էջ 21:

[10] «Հայոց Ցեղասպանութեան Վերաբերեալ Դանիական Փաստաթղթերից», http://norkhosq.net :

[11] Մանրամասն տե՛ս՝ *Յուշամատեան Զմմառու Տիրամօր Վանքին Հիմնարկութեան 1749-1999*, Պէյրութ, Տպ. Փոմիկրավիւր-Մաթչ Փրինթ, 2001, էջ. 247-259, 269-280:

[12] Յովհաննէս Աւագ Սրկ. Մկրտիչեան, «Մեր Նահատակ Կղերականները», *Մասիս*, Ապրիլ, Պէյրութ, 2011, էջ 22

[13] Նոյն, էջ 30:

[14] Նոյն, էջ 22-29:

[15] Արեստակէս Սիմաւորեան, Վահրամ Հովեան, *Ջաւախահայութեան Որոշ Հիմնախնդիրներ (Ջաւախահայութեան Դաւանանքային Եւ Տեղեկատուական Վիճակի Ուսումնասիրութիւն)*, Երեւան, «Գասպրինտ», 2009, էջ 23:

[16] Մետերնիխ, «Հայերի Հետապնդումները Թուրքիայի Արեւելեան Շրջաններում, Տերապիա, 10 Յուլիսի 1916թ.», *Կայսերական Գերմանական Դեսպանութիւն N 368*, http://www.genocide-museum.am/arm/german.php :

[17] F. Dündar, *Modern Turkiyenin Şifresi. İttihat ve Terakki'nin Etnisite Muhendisliği (1913-1918)*, (Ժամանակակից Թուրքիայի գաղտնաբառը. Իթթիհատ Վէ Թերաքքըի

էթնիկ ճարտարապետութիւնը (1913-1918), İstanbul, "İletişim", 2008 (2-inci baskı), էջ 315:

[18] Հատուած Վոլֆգանգ Գուստի «Կարո՞ղ էր Արդեօք Գերմանիան Փրկել Հայերին», Ֆրանկֆուրտի Ս. Պօղոս Եկեղեցում 2009 Ապրիլի 24ի ելոյթից (http://www.wolfganggust.net/armenocide/gusthome.nsf/d3cb8075f11223b4c12572ef004f2e81/e4971e2aa8ad1bd3c12576210077c32e?OpenDocument):

[19] «Հայ Կաթոլիկ Եկեղեցի» (http://araratian-tem.am/media/Hay%20Katolik%20Ekexeci.doc):

[20] Ս. Արոյեան, Համառօտ Պատմութիւն Հայ Կաթողիկէ (Կաթոլիկ) Եկեղեցու, 2002, http://www.armeniancatholic.ru/pdf/armchurch.pdf :

THE ARMENIAN GENOCIDE AND THE ARMENIAN CATHOLICS:
SOME REMARKS
(SUMMARY)

ARESTAKES SIMAVORYAN
ares@noravank.am

According to historical records at least 30,000 Armenians from the Armenian Catholic community, 102 clergymen of the Armenian Catholic Church, several bishops and 45 monks became victims of the Genocide, and numerous members of the community were violently converted to Islam. In spite of this reality Turkish scientific and semi-scientific circles make the baseless claim that the Armenian Catholics did not suffer as they were under the aegis of the European powers. In the article a number of facts from Turkish sources are presented. They demonstrate that the Young Turks were free in their actions, and the Turkish "scientific" findings that the Armenian Catholics were under the aegis of European countries are only a policy to distort the facts of the Armenian genocide.